իրար ազգական գերդաստանները, այդ բազմանդամ ծխերը հավանական է, որ մեծ մասամբ դեռ զետեղված էին լինում միևնույն թաղում, իրարից ոչ հեռու։ Այդպես էր օրինակ՝ Խնձորեսկում[9]։ Այսպիսի թաղի մեջ դրկիցության և ազգակցության կապերն իրար հետ խաչաձևվում էին, և դրանց կից մշակվում էին միջթաղային փոխհարաբերությունների ձևերը։ Միջթաղային համակեցությունը նորմավորող սովորությունները մեր գիտարշավները անկարող եղան գրանցել։ Դրանք արդեն ջնջվել էին ծերունիների հիշողությունից։ Հաջորդ ժամանակաշրջանում, վաշխառուական կապիտալի զարգացման հետևանքով, երբ տեղի էր ունենում խոշոր գերդաստանների մանրացման պրոցեսը և գյուղում գերիշխանություն էր ստանում փոքր ընտանիքով ապրելու սովորությունը, ավելի և ավելի ծավալվում և բարդանում էր հարևանության բարոյախոսությունը։ Խոշոր գերդաստանի քայքայվելը և մանր ընտանիքների բաժանվելն արդեն մինչև սովետական իրավակարգի հաստատվելը Զանգեզուրի բոլոր գյուղերում դարձել էր համատարած երևույթ։ Միայն կոլտնտեսային շինարարությունը վերջնական հաղթանակը տվեց այն ձևին, որտեղ ընտանիքը կազմված է մեկ ամուսնական զույգից և նրա անմիջական առաջին սերունդից, որի չափահասության հասած անդամները ձգտում են ամուսնանալուց հետո ծնողներից անջատվել և ապրել սեփական տնով, ունենալով սեփական եկամուտներ, առանձին աշխատանք։

1823 թ. Մոգիլևսկին և Երմոլով 2-րդը Ղարաբաղի պրովինցիայի բնակավայրերը և նրանց վճարած պետական տուրքերը ցուցակագրելիս[10] տալիս են այդ բնակավայրերի ծխերի՝ ընտանիքների թվերը, որոնք աչքի են ընկնում իրենց փոքրությամբ։ Դա բացատրվում է որոշ չափով նրանով, որ նրանց ժամանակվա ծուխը բազմանդամ էր։ Դրան նպաստում էր և այն հանգամանքը, որ թե՛ պետական և թե՛ կալվածատիրական տուրքերը գանձվում էին, ինչպես և հասարակական պարտականությունները բաշխվում էին խանական կառավարության օրով ըստ ծխերի, առանց աչքի առաջ ունենալու նրանց ապահովվածությունը հողերով, ինվենտարով, անասունով։

Եթե այդ թվերը համեմատելու լինենք 1931 թ. սովետական ժամանակի թվերի հետ, կտեսնենք ծխերի թվերի չափազանց մեծ աճը։ Այսպես, 1823 թ. և 1931 թ. համեմատությունը տալիս է հետևյալ պատկերը (աղյուսակ 6)։

Գորիսի ծխերի ահագին ավելացումը, իհարկե, պետք է վերագրել այն բանին, որ Գորիսը վեր էր ածվել գավառի վարչական կենտրոնի, իսկ մյուս գյուղերում թվերի տարբերությունը հետևանք էր ոչ միայն բնական աճի, այլև առանձնապես 1823 թ. հետո տեղի ունեցած ծխերի մանրանալուն։ Ռուսական տիրապետության հաստատումից հետո, XIX դ. և XX դ. սկզբներին, ավելի քան մեկ հարյուրամյակի ընթացքում հին գերդաստանային սիստեմի քայքայման պրոցեսը ընթանում էր Զանգեզուրում ավելի դանդաղ, քան թե Անդրկովկասի այն գավառներում, որտեղ այդ տիրապետությունը, բարելավելով հաղորդակցության հարմարությունները, ավելի վաղ էր կապ հաստատում տեղական տնտեսության և ռուսական շուկայի միջև։ Զանգեզուրը երկար տարիներ մնաց այդ գլխավոր ճանապարհներից դուրս, մեկուսացած։ Պետական

---

[9] Շատ բնորոշ է թաղերի կազմը Ախալքալակի շրջանի Կարծախ գյուղում, որտեղ ազգակցությամբ ներքուստ շաղկապված թաղը տեղավորված է մի այլ նման թաղից բավականին հեռու, անջատված։

[10] «Описание Карабахской провинции».